ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1538

15.05.2015թ.

«ՈՍ... ...ՏԱՐ
ՄՏՈ № 2198
18. 05 15

ՀՀ ոստիկանության պետ՝
գեներալ-լեյտենանտ
պարոն Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄՏՈ № 3124
«18» 05 2015թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խմբի կողմից Ձեզ ուղղված սույն թվականի ապրիլի 1-ի թիվ 2621/1522 գրությանը ի պատասխան, 06.05.2015թ-ի թիվ 2/2-1-1440 գրությամբ ոստիկանության կողմից տրվել է մեկնաբանություն, որի 2-րդ և 3-րդ կետերի վերաբերյալ Դիտորդական խումբը համաձայն չէ, հետևյալ մեկնաբանությամբ.

1. Երկու դեպքով էլ անձիք բերման են ենթարկվել համապատասխան ոստիկանության բաժին և նրանց բերման ենթարկելու հիմքը ՁՊՎ-ում պահվել է, որպես անազատության մեջ գտնվելու փաստ: Տվյալ արձանագրությունը հիմք է հանդիսանում հաշվարկել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով նախատեսված պահանջը:

2. Դիտորդական խմբի ընթացիկ հաշվետվությունը ներկայացնելուց հետո է միայն ՀՀ ոստիկանությունը հարցում ուղարկել ՀՀ քննչական կոմիտե և պարզաբանում ստացել, որ նրանք ազատ են արձակվել և անազատության մեջ չեն եղել: Այս ամենը հաշվի առնելով կարելի է հստակ նշել, որ մինչ Դիտորդական խմբի ընթացիկ հաշվետվություն ներկայացնելը, մինչ ՀՀ ոստիկանության կողմից հարցում ուղարկելը, տվյալ բաժնի աշխատակազմի համար դա համարվել է խախտում:

3. Խնդրում ենք ուշադրություն դարձնել տրված մեկնաբանության երկրորդ կետի երկրորդ նախադասության բովանդակությանը <<վեջինս նույն օրը ***ներկայացվել է*** ՀՀ ԱՆ Նարկոլոգիական կենտրոն և համապատասխան նմուշներ ստանալուց հետո Արտաշատի քննչական բաժնում ձերբակալվել և տեղափոխվել է ՁՊՎ>>: Մեր կարծիքով, եթե անձը գտնվում է ազատության մեջ, ներկայանում է պահանջված վայր, այլ ոչ թե ներկայացվում է պահանջված վայր: Այստեղից, եզրակացություն, որ նշված անձը ազատության մեջ չի եղել:

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

4. Հարկ ենք համարում նշել, որ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշման 28-րդ կետի՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ << *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածը պետք է մեկնաբանել 131[1]-րդ հոդվածի լույսի ներքո և ամրագրել, որ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ալկոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:*

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից>> :

Հաշվի առնելով, որ նշված անձիք բերման են ենթարկվել ոստիկանության կողմից, հաջորդիվ ընդունվել և պահվել են ՁՊՎ-ում և նշված անձնաց իրավունքների խախտումների վերաբերյալ, պետք է պարզաբանում տա ՀՀ ոստիկանությունը խնդրում ենք ուսումնասիրել Դիտորդական խմբի կողմից ներկայացրած անհամաձայնությունները և ևս մեկ անգամ տալ արդեն նշված հանգամանքների վերաբերյալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ ՀասմիկՍահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

«29» 05 2015թ.

2/2-1-1736

Ձեր՝ 15.05.2015թ. թիվ 2621/1538 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ Ձեր 01.03.2015թ-ի թիվ 2621/1522 գրությանը ՀՀ ոստիկանության կողմից 06.05.2015թ-ի թիվ 2/2-1-1440 գրությամբ արդեն իսկ տրվել է հիմնավոր և սպառիչ մեկնաբանություն:

Ոստիկանության ծառայողների գործողություններն իրավաչափ են և վերջիններս գործել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան: Ոստիկանության ծառայողների գործողությունների արդյունքում բերման ենթարկված անձանց իրավունքները չեն խախտվել, ինչպես նաև բաժնի աշխատակազմի համար դա խախտում չի համարվել:

ՀՀ ոստիկանության շտաբ